

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեվանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման եվ օգտագործման 2020 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարական ի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակարգ տարողը	Ժամկետը	2020 թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը	2020 թվականի աշխատանքների և միջոցառումների կատարման ընթացքը
1. Կառավարման համակարգի կատարելագործում							
1.1	«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման համակարգի բարելավում	1) «Սևան» ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպում	Շրջակա միջավայրի նախարարություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն և Առողջապահության նախարարություն «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2020 թ. և շարունակական	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփական միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	ՀՀ Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 527-Ն, 2012թ. հունիսի 07-ի N 752-Ն, 2015թ. հոկտեմբերի 01-ի N 1122-Ն որոշումներով «Սևան» ազգային պարկի տարածքում ստեղծված 8 հանրային լողափերից կահավորված և գործում են միայն N 1, N2, N3 հանրային լողափերը: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը նախապատրաստական աշխատանքներ է իրականացրել հանրային լողափերի բարեկարգման, մաքրման ուղղությամբ: ՀՀ COVID-19 համավարակով պայմանավորված 2020թ. ռեկրեացիոն հսկողության գործունեության խմբի տեսուչների կողմից իրականացվել է հսկողություն հանրային լողափերում մարդկային

				(համաձայնությամբ)		<p>կուտակումները չթույլատրելու և վարակի տարածումը կանխարգելելու նպատակով:</p> <p><u>Արտակարգ իրավիճակների նախարարություն</u></p> <p>«Սևան» ազգային պարկի №1, №2 և №3 հանրային լողափերում ու Շողակաթ համայնքի Սևանա լճի ափամերձ գոտում ԱԻՆ փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջոկատի և ՓՈՒՎ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի ուժերով 2020 թվականի ամառային լողասեզոնի ընթացքում իրականացվել է շուրջօրյա հերթապահություն:</p> <p><u>Առողջապահության նախարարության</u></p> <p>կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվել են Սևանա լճի ռեկրեացիոն գոտիների հատվածներում լճի ջրի 78 նմուշի մանրէաբանական և 146 նմուշի քիմիական հետազոտություններ, որոնց արդյունքում վերոգրյալ նմուշներում ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի ապրիլի 05-ի N 09-Ն հրամանով հաստատված «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներից շեղումներ չեն արձանագրվել: Կատարվել են նաև լճի ջրի 31 նմուշի թունաբանական հետազոտություններ, որից 6 նմուշների ջրերը ունեցել են թունավոր ազդեցություն: Վերջիններիս նմուշառման հասցեները ներկայագվել են համապատասխան</p>
--	--	--	--	-------------------	--	---

						մարմիններին՝ լողը արգելելու և լճի ռեկրեացիոն տարածքների ջրի որակը վերականգնելու նպատակով:	
		2) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարողությունների զարգացում (մասնավորապես՝ տարեկան անտառալանավորման, հատատեղերի հատկացման տեղորոշման), մասնագիտական ունակությունների կատարելագործում	Շրջակա միջավայրի նախարարություն	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (համաձայնությամբ)	2020թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ «Սևան» ազգային պարկի անտառածածկ տարածքներում կատարվել են ուսումնասիրություններ, ինչի արդյունքում հստակեցվել են նոսրացման ենթակա շուրջ 530 հա սոճենի տեսակի միատարր անտառամասեր, որից 40 հա՝ Արտանիշի մասնաճյուղի Դրախտիկ տեղամասում, 150 հա՝ Նորատուսի մասնաճյուղի Այրիվան տեղամասում, 140 հա՝ Նորատուսի մասնաճյուղի Նորատուսի տեղամասում, 30հա՝ Վարդենիկի մասնաճյուղի Վարդենիկի տեղամասում, 170 հա՝ Վարդենիկի մասնաճյուղի Ծովինար տեղամասում: Կազմակերպվել է առցանց քննարկում շահագրգիռ կողմերի և ոլորտի մասնագետների հետ՝ ընտրված տեղամասում նշված ծառերի փորձնական նոսրացումներ կատարելու և նոսրացման ենթակա ծառերի ընտրության նպատակով:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի կողմից կատարվել են անտառածածկ տարածքների սանիտարական հատման ենթակա ձնաջարդ, քամատապալ և չորացած ծառերի համարակալում և հաշվեգնահատում:</p> <p>Պարկի տարածքներում կատարվել են անտառապաթուրգիական ուսումնասիրություններ, կազմվել են հաշվեգնահատման ցուցակներ և ներկայացվել է եզրակացություն: Նախարարության համապատասխան</p>

							մասնագետների կողմից տրվել են ցուցումներ և շտկումներ, որից հետո աշնանը պարկի բոլոր մասնաճյուղերի տարածքներում իրականացնել սանիտարական հատումներ: Մասնագիտական ցուցումներ և շտկումներ են առաջարկվել նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ հենարանների որոշակի հատվածում օդային գծերի եզրաչափերը խախտող ծառերի հատման կամ էտման աշխատանքներ իրականացնելու համար:
<p align="center">2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ</p>							
2.1	Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի մոնիթորինգի իրականացում	1) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում 2) Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020 թ. և շարունակական	«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում	<p align="center">«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»</p> <p>ՊՈԱԿ-ը պետական ծրագրի շրջանակներում Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում իրականացրել է.</p> <ul style="list-style-type: none"> • <i>հիդրոօդերևութաբանական մոնիթորինգ.</i> կատարվել են լճի ջրի մակարդակի, ջերմաստիճանի, սառցային երևույթների, գոլորշացման և այլ դիտարկումներ, գետերով, Արփա-Սևան ջրատար թունելով Սևանա լիճ մուտք գործած և ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրաքանակների հաշվառում, • <i>ջրի որակի մոնիթորինգ.</i> Սևանա լճի մակերևույթից և խորքային շերտերից, Սևանա լիճ թափվող 10 գետից (Ձկնագետ, Մասրիկ, Մասրիկի Սոթք վտակից, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվազ, Գավառագետ), ինչպես նաև Արփա-Սևան, Սպանդարյան-Կեչուտ ջրատարների 20 մոնիթորինգային դիտակետից վերցված նմուշների հիդրոքիմիական անալիզներ: <p align="center">Հիդրոօդերևութաբանական</p>

					<p>Արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2020թ. ընթացքում կատարման ենթակա նշանակության աշխատանքների ծրագրին համապատասխան</p>	<p>տեղեկատվությունն ամեն օր հաղորդվել է շահագրգիռ կազմակերպություններին, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին:</p> <p>Մարտի երրորդ տասնօրյակում հանրապետության ղեկավար մարմիններին, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին և այլ կազմակերպությունների տրամադրվել է Սևանա լճի մակարդակի կանխատեսում 2020թ. հուլիսի 1-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի համար, ինչպես նաև գարնանային վարարումների ընթացքում Սևանա լիճ գետային ներհոսքի կանխատեսում:</p> <p>Հարկ է նշել, որ կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված համաշխարհային օդերևութաբանական դիտարկումների ցանցը 2020 թվականի ընթացքում աշխատել է և շարունակում է աշխատել ոչ լիակատար: Այս երևույթի արդյունքում հիդրոօդերևութաբանական կանխատեսումների մոդելների մեջ հաշվարկային տվյալները մուտքագրվում են ոչ ամբողջությամբ, որն էլ իր հերթին էականորեն ազդում է հատկապես միջնաժամկետ և երկարաժամկետ հիդրոօդերևութաբանական կանխատեսումների արդարացման որակի վրա: Պայմանավորված այս հանգամանքով, կանխատեսումների թողարկման ժամանակ երկարաժամկետ ճշգրիտ հիդրոօդերևութաբանական կանխատեսումներ հնարավոր չէր կատարել, այդ իսկ պատճառով Սևանա լճի վերաբերյալ թողարկված կանխատեսումների արդարացվածությունը ցածր է եղել՝ 70%-ի սահմաններում:</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Իրականացվել է տեղեկատվական ապահովում և ծառայությունների մատուցում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպություններին:</p> <p>Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգ՝ լճի ամբողջ մակերեսով իրականացվել է հուլիս ամսին: Լճի ջրի որակի ուսումնասիրության համար վերցվել են փորձանմուշներ ինչպես լճի մակերևույթից, այնպես էլ խորքային շերտերից՝ 7 և 30մ խորություններից, որոնցից յուրաքանչյուրում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ:</p> <p>Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրություններ իրականացվում են Գերմանիայի Մագդեբուրգի Շրջակա միջավայրի հետազոտության Հելմհոլցի կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն հետ համատեղ SEVANMODE2 ծրագրի շրջանակում: Այդ նպատակով հունվար, ապրիլ, մայիս, հուլիս-դեկտեմբեր ամիսներին համատեղ իրականացվել են նմուշառումներ Մեծ և Փոքր Սևանի մեկական դիտակետից՝ մակերևույթից և տարբեր խորություններից (Մեծ Սևանի համար՝ 0.5, 5, 10, 20, 25, 30մ խորություններից, Փոքր Սևանի համար նաև՝ 0.5, 5, 10, 20, 25, 30, 55, 70, 80մ խորություններից):</p> <p>Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, ՍԹԿ-ն գերազանցում են հիմնականում թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկի, թթվածնի քիմիական պահանջարկի, ցինկի, պղնձի, քրոմի, կադմիումի, մանգանի, վանադիումի և սելենի կոնցենտրացիա-</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ները: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվում են ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:</p> <p>Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ առանց կենսաբանական մաքրման արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ կարող են տանել ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:</p> <p>2020թ. ընթացքում Սևանա լիճ թափվող գետերից՝</p> <p>Ձկնագետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է հիմնականում «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակից» «անբավարար» (3-րդից 4-րդ դաս):</p> <p>Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև գնահատվել է հիմնականում «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հիմնականում «վատ» (5-րդ դաս):</p> <p>Սոթք գետի ջրի որակը Սոթք գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակից» «անբավարար» (3-րդից 4-րդ դաս):</p> <p>Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախարածոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատից» «լավ» (5-րդից 2-րդ դաս):</p> <p>Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հիմնականում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝</p>
--	--	--	--	--	--	--

						<p>հիմնականում «միջակ» (3-րդ դաս):</p> <p>Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավից» «անբավարար» (2-րդից 4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):</p> <p>Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատից» «անբավարար» (5-րդից 4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):</p> <p>Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է հիմնականում «միջակ» (3-րդ դաս):</p> <p>Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հիմնականում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):</p> <p>Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակից» «վատ» (3-րդից 5-րդ դաս):</p> <p>Արփա-Սևան ջրատարի ջրի որակը 0.7 կմ Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում գնահատվել է հիմնականում «միջակ» (3-րդ դաս):</p> <p>Սպանդարյան-Կեչուտ ջրատարի ելքի հատվածում ջրի որակը գնահատվել է հիմնականում «միջակ» (3-րդ դաս):</p> <p>Սևանի ջրավազանային կառավարման տարածքի որակի մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վերլուծվել և ամփոփվել են «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամսյա տեղեկանքներում, եռամսյակային տեղեկագրերում, հանձնվել համապատասխան կազմակերպություններին և հրապարակվել ՊՈԱԿ-ի պաշտոնական</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ինտերնետային կայքում (www.armmonitoring.am):</p> <p>«ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն»: «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» (ՀՀ ԳԿ) ծրագրի շրջանակներում իրականացվել է Սևանա լճի «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակման նպատակով իրականացվել է լճի ջրերի «ծաղկմանը» նպաստող հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական գործոնների բացահայտում, ավտոտրոֆ օղակի տեսակային կազմի որոշում և քանակական ցուցանիշների գնանատում: Ծրագրի իրականացման ընթացքում կատարվել է Սևանա լճի ջրի ծաղկմանը նպաստող հիդրոքիմիական ցուցանիշների հետազոտում:</p> <p>«Սևանա լճի լճախորշերի էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություն» ծրագրի նպատակն էր բացահայտել Սևանա լճի լճախորշերի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը լճային ողջ էկոհամակարգի ու կենսաոռոտության ձևավորման վրա: Ուսումնասիրվել են Սևանա լճի լճախորշերի ջրաբանական, ջրաֆիզիկական, ջրաքիմիական ու ջրակենսաբանական ռեժիմների փոփոխությունները, կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչները: Հետազոտվել են սննդային շղթայի հիմնական օղակների միկրոօրգանիզմների սապրոֆիտ, կոլիֆորմ բակտերիաները, բորբոսասնկերի, բարձրակարգ օրային բույսերի, հատակային ֆաունայի և</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ձկնաշխարհի որակական և քանակական ցուցանիշները: Արտանիշ, Ծովագարդ լճախորշերը և Ծովագարդի լճային հատվածը դասվել են «մաքուր» ջրերի դասին: Ծովագարդի և Լիճքի լճախորշերը 2020թ. դասվել են «բավարար մաքուր» ջրերի դասին: Լճաշենի լճախորշը 2019թ. դասվել է «բավարար մաքուր», իսկ 2020թ. «կեղտոտ» ջրերի դասին:</p> <p>Մակրոֆիտային համակեցության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի լճախորշերում առկա են նպաստավոր պայմաններ դրանց առատ աճի և տարածման համար: Յամաքի մեջ խորացած լճախորշերում մակրոֆիտային համակեցությունները առավել լավ են զարգացած:</p> <p>Սևանա լճի լճախորշերի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է մակրոֆիտների 28 տեսակ, որից 11-ը հիդատոֆիտ տեսակներ են, 7-ը հելֆիտներ, 4-ը հիզրոհելֆիտներ, 4-ը հիդրոֆիտներ և 2 հիզրոմեզոֆիտներ:</p> <p>2020 թ. մեկնարկել է Գերմանիայի կրթության և գիտության ֆեդերալ նախարարության և շրջակա միջավայրի նախարարության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում Սևանա լճի կառավարման գիտահեն գործիքակազմի ստեղծում» թեմայով հայ - գերմանական միջազգային նախագիծը, որտեղ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը ներգրավված է կոնսորցիումի կազմում և պատասխանատու է լճի ջրի որակի մշտադիտարկման հեռազննման մեթոդի կատարելագործման և մշտադիտարկման</p>
--	--	--	--	--	--	---

							աշխատանքների իրականացման համար:
2.2	Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության ազդեցության գնահատում Սևանա լճի էկոհամակարգի վրա	Մնուցող նյութերի ազդեցության գնահատում, հատակային նստվածքներում որոշ ինդիկատորային ցուցանիշների (ընդհանուր ֆոսֆոր, ընդհանուր ազոտ, երկաթ) քանակության ավելացման գնահատում	Շրջակա միջավայրի նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (համաձայնությամբ)	2020թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<u>Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ</u> 2020 հունվարի 1- ի դրությամբ «Սևան ակվա» ՓԲ ընկերության ցանցավանդակային տնտեսությունում առկա ձկան քանակը կազմել է 134806.89կգ իսկ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 190529 կգ: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսությունում ձկնադրվել է 12859 կգ տարբեր քաշի գեղարքունի մամրածուկ: Նույն ժամանակահատվածում իրացվել է 51976 կգ ապրանքային ձուկ, իսկ տարեկան կորուստը (անկում) կազմել է 20001.75: Արդյունքում, ցանցավանդակային տնտեսությունում ձկների քաշաճը կազմել է 114,840.86 կգ: Նույն ժամանակահատվածում ձկներին կերակրվել է 191,588.00 կգ կեր: Հաշվի առնելով կերում ֆոսֆորի քանակությունը, ձկան մեջ կուտակվածի և արտանետումի քանակը՝ 2020 թվականի ընթացքում ցանցավանդակային տնտեսության գործունեության արդյունքում Սևանա լիճ է արտանետվել 1398.8 կգ ֆոսֆոր:
2.3	Սևանա լճի	Առաջնահերթ	Շրջակա	Գեղարքունիքի	2020 թ. և	Հայաստանի	Կառավարության 2019-2023թ.թ. գործունեության

<p>շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում</p>	<p>մաքրման ենթակա, մասնավորապես՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառաշերտի մաքրում, շուրջ 271.0 հա</p>	<p>միջավայրի նախարարություն</p>	<p>մարզպետարան</p>	<p>շարունակական</p>	<p>Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառում՝ 208238.5 հազ. դրամ</p>	<p>ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների 2020թ. 1-ին կիսամյակի արդյունքների հաշվետվության 88.1 կետով նախատեսված Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացման նպատակով՝ շրջակա միջավայրի նախարարությունը հանդես գալով որպես պատվիրատու՝ «Հարությունյան Շին» ՍՊ ընկերության (այսուհետ՝ կապալառու) հետ 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքել է «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման» № ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ պայմանագիր), որտեղ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կազավիճակում հանդես է եկել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, իսկ որպես մաքրման աշխատանքների հեղինակային հսկողության պատասխանատու կառույց հանդես է եկել շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:</p> <p>Պայմանագրի շրջանակներում 2019-2021թ.թ. նախատեսվել է մաքրել 750 հա ջրածածկի ենթակա տարածք, որից 2020 թվականի համար նախատեսվել է մաքրել 271.0 հա ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Մարտունի և Երանոս տեղամասերում և Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս և Ծովակ տեղամասերում: Մաքրման աշխատանքներ իրականացվել են միայն Ծովակ և Վարդենիս տեղամասերում: Ծրագրի շրջանակներում</p>
---	--	---------------------------------	--------------------	---------------------	--	--

							<p>Կապալառուի կատարված աշխատանքում առկա են եղել էական շեղումներ նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, նախագծին և ծավալաթերթին: Հաշվի առնելով հնարավոր ռիսկերը՝ նախարարությունը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն նյութերի ուսումնասիրման և իրավական գնահատականի նպատակով, միաժամանակ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է: Տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների պայմանագրերը ֆինանսավորվել են կապալային աշխատանքների փաստացի ընդունված կատարողականին համապատասխան (№ 4 կատարողական ակտ՝ Ծովակի տեղամասում 23 հա մաքրված տարածք և № 5 կատարողական ակտ՝ Վարդենիս տեղամասում 22 հա):</p>
2.4	Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում	Լճի շրջակայքում անտառաշերտի հիմնում	Շրջակա միջավայրի նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2020 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p>Նոր անտառաշերտի հիմնման համար ՀՀ պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել և խոշոր անտառաշերտերի հիմնում չի կատարվել, սակայն 2020թ-ին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը իր միջոցներով Սևան մասնաճյուղում իրականացրել է ծառատնկման աշխատանքներ 1000 մ² տարածքի վրա, ինչի համար որպես տնկանյութ օգտագործվել է պարկի տարածքում առկա բնական վերաճից ստացված 3-5 տարեկան սոճենի տեսակի տնկիները:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիզների կողմից 2020թ. մայիսի 19-ին</p>

							հանրային N1 և N3 լողափերում իրականացվել է ծառատունկ՝ Սևանի մասնաճյուղում առկա սոճենի տեսակի ծառերի բնական վերաճից ստացված 200 հատ տնկիներով:
2.5	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների մաքրում 1901.5մ բացարձակ նիշից ներքև գտնվող թվով 394 միավոր շենք-շինությունների ապամոնտաժում՝ համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում	Ինքնակամ կառուցված շենք-շինությունների սեփականատերեր (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն	2020թ. և շարունակական	Ինքնակամ կառուցված մաքրման ենթակա շենք-շինությունների սեփականատերերի միջոցների հաշվին, տիրազուրկ շինությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	2010թ.-ին կադաստրի կոմիտեի կողմից կատարված գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ընթացքում հաշվառվել է 1905.0մ նիշից ցածր 4729 շենք-շինություն, որոնցից շուրջ 850-ը նախորդ տարիների ընթացքում վարձակալների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցներով ապամոնտաժվել են: Ներկայումս առկա են շուրջ 3800 շենք-շինություններ, ինչը սակայն լրացուցիչ ճշգրտումների կարիք ունի: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին իրականացվել է մինչև 1905.0 բացարձակ նիշն ընկած տարածքների շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներ: Ապամոնտաժվել է 8 ապօրինի շենք-շինություն:
2.6	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման	կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Գեղարքունիքի մարզպետարան	2020թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում	Շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացման շրջանակներում 2019 թվականի

<p>թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>	<p>թույլատրելի չափաքա նակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>				<p>ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման շրջանակներում՝ 7624.3 հազ. դրամ և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p>	<p>դեկտեմբերի 9-ին կնքվել է պայմանագրի «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/02» ծածկագրով:</p> <p>ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն:</p> <p>«Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի շրջանակներում հետազոտվել են Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի կենսաբանական և պոպուլյացիոն ցուցանիշները, գնահատվել դրանց պաշարները:</p> <p><u>Սևանա լճում ձկնային պաշարներն ունեն հետևյալ պատկերը՝</u></p> <p style="text-align: center;">ՍԻԳ</p> <p>Սիգի գնահատման արդյունքները ցույց է տվել, որ. 2018-2020թթ. ժամանակահատվածում դիտվում է սիգի պաշարների անկման միտում:</p> <p>Շարունակվող գերորսի պատճառով նկատվում է նաև սիգի պոպուլյացիայի երիտասարդացում, ինչի արդյունքում արդյունագործական նշանակության պաշարների հարաբերական մասնաբաժնի աճ չի նկատվել և մնում է ընդհանուր պաշարների 25% սահմաններում:</p> <p>Արդյունագործական նշանակության պաշարները ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ կազմել են մոտ 586,2տ, որը նախորդ տարվա համեմատ 11.7% քիչ է: Ընդ որում, Փոքր Սևանում արդյունագործական պաշարները կազմել են 217.65տ, իսկ Մեծ Սևանում՝ 368.6տ:</p> <p>Արդյունագործական պաշարների միջին խտությունը Մեծ Սևանում կազմել է 4.5կգ/հա, իսկ Փոքր Սևանում 7.1կգ/հա:</p> <p>Փոքր Սևանում 2020թ. գրանցվել է ավելի մեծ կենսազանգված, քան 2019թ, ինչը հավանաբար</p>
--	---	--	--	--	---	--

						<p>պայմանավորված է ձկների ձվադրման միգրացիայի ընդհանուր միտումներով, երբ համապատասխան ջերմաստիճանների պարագայում Փոքր Սևանից ակտիվ շարժ է սկսվում դեպի Մեծ Սևան:</p> <p>Մեծ Սևանում սիգի ձկնային պաշարները կազմել են 1474տ, իսկ Փոքր Սևանում 870.6տ: Ընդհանուր պաշարները կազմել են 2345տ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 12.1%-ով:</p> <p><u>ԱՐԾԱԹԱՓԱՅԼ ԿԱՐԱՍ</u></p> <p>Արծաթափայլ կարասի պաշարները 2020թ.-ին գնահատվել են մոտ 27տ-ի սահմաններում: Առավելագույն կուտակումներ են արձանագրվել Ծովագյուղի մոտակա ջրային տարածքում և Արտանիշ-Նորատուս գծի հատվածում:</p> <p>Արծաթափայլ կարասի պաշարները լճում տարեցտարի կրճատվում են, ինչը գերորսի արդյունք է, սակայն հաշվի առնելով Սևանա լճում այս ձկնատեսակի անցանկալի կարգավիճակը, առաջիկա տարում առաջարկվում է շարունակել նրա չսահմանափակված որսը լճում:</p> <p><u>ԻՇԽԱՆ</u></p> <p>Իշխանի ընդհանուր զանգվածը լճում որոշվել է պաշարների գնահատման նպատակով իրականացված ստուգիչ որսի միջոցով: Փոքր Սևանում իշխանի պաշարները կազմել են 0,47 տ, իսկ Մեծ Սևանում՝ 4,09 տ: Ըստ 2020թ. ուսումնասիրությունների, Սևանա լճում իշխանի ընդհանուր պաշարը կազմել է մոտ 4,56 տ:</p> <p>2017-2019 թթ. լճում նկատվել է իշխանի պաշարների կրճատում 17-ից մինչև 1.0-1.5 տ, որը այդ տարիների ընթացքում իշխանի ապօրինի և զվերահսկվող որսի արդյունք էր: Սևանա լճում այս</p>
--	--	--	--	--	--	--

						<p>տարի գրանցված իշխանի պաշարների զգալի աճը պայմանավորված է Սևանի իշխանի պաշարների վերականգնման նպատակով վերջին տարիներին Սևանա լիճ և գետեր բաց թողնված Սևանի իշխանի մանրածկերի և հասուն առանձնյակների հաշվին: Այսպիսով, իշխանի պաշարը լճում անցած տարվա համեմատ աճել է, իսկ պաշարի գերակշիռ մասը կազմել են 2+ տարեկան ձկները:</p> <p><u>ԽԵՑԳԵՏԻՆ</u></p> <p>Խեցգետնի պոպուլյացիայի վիճակը տարեցտարի վատանում է: Վերոհիշյալ հիդրոբիոնտի արդյունագործական պաշարները խզված են, սակայն խեցգետնի անօրինական որսը լճում շարունակվում է: Նշված կենսաոռոտի անկառավարելի որսի և հիվանդությունների հետևանքով կանգնած է ոչնչացման եզրին: 2020թ. -ին Մեծ Սևանի տարածքում 1 հա-ում խեցգետնի կենսազանգվածը կազմել է 1կգ 220գ, Փոքր Սևանում 1.5 կգ: Խեցգետնի ընդհանուր զանգվածը լճում մոտ 105տ է:</p> <p>Լճի խեցգետնարդյունավետությունը վերականգնելու նպատակով պետք է ձեռք առնել հրատապ միջոցներ, մասնավորապես արգելել խեցգետնի որսը լճում և պայքարել որսագողության դեմ, արգելել խեցգետնի վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս:</p> <p><u>ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> Սիգի ընդհանուր պաշարները կազմել են 2345տ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է
--	--	--	--	--	--	---

						<p>12.1%-ով: Արդյունագործական պաշարը մնում է ընդհանուր պաշարների 25% սահմաններում:</p> <ul style="list-style-type: none"> • 2018-2020թթ. ժամանակահատվածում դիտվել է սիգի պաշարների անկման միտում: Արդյունագործական նշանակության պաշարները ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ կազմել են մոտ 586.2տ, որը նախորդ տարվա համեմատ 11.7% քիչ է: • 2020թ. ինչպես գարուն-ամառ շրջանում, այնպես էլ աշնանը Սևանա լճից որսվող սիգերի մեծամասնությունը եղել 1+ տարիքի ձկները: • 2018-2019թթ. համեմատ 2020թ. Սևանա լճում նկատվել է սիգի պաշարների կրճատում, ինչը գերորսի հետևանքով լճում սիգի թվաքանակի կրճատման, ինչպես նաև պոպուլյացիայում մեծ տարիքի առանձնյակների մասնաբաժնի կրճատման արդյունք է: • Առաջարկվում է ամբողջ տարվա կտրվածքով ուժեղացնել սիգի որսի հսկողություն լճում, չտրամադրել արդյունագործական որսի թույլտվություն և արգելք դնել 1+ տարեկան (մինչև 400 գրամ զանգվածով) սիգ ձկնատեսակի համար, ինչպես նաև որսի արգելք դնել սիգ ձկնատեսակի ձվադրման շրջանում, որը եղանակային պայմաններից կախված, ամենայն հավանականությամբ, կընդգրկի դեկտեմբերի 15-ից հունվարի 20-ը ժամանակահատվածը: Առավել ինտենսիվ գործընթաց կարելի է սպասել դեկտեմբերի վերջ հունվարի սկիզբ ժամանակահատվածում: Ուստի խիստ կարևորվում է այս ժամանակահատվածում որսագողության դեմ համալիր պայքարի ակտիվազումը:
--	--	--	--	--	--	---

						<ul style="list-style-type: none"> • 2021թ-ի փորձնական որսի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը կարող է կարծիք տալ միայն 2020 թ-ի իրականացված փորձնական որսի տվյալների վերլուծության հիման վրա: • Արծաթափայլ կարասի (լճաձաձանի) պաշարները 2020թ.-ին գնահատվել են մոտ 27տ-ի սահմաններում: Ընդ որում լճաձաձանի կուտակումները համընկնում են հիմնականում լիթորալի և սուբլիթորալի գոտիների հետ: Առավելագույն կուտակումներ են արձանագրվել Ծովագյուղ գյուղի մոտակա ջրային տարածքում և Արտանիշ-Նորատուս գծի հատվածում: • Արծաթափայլ կարասի պաշարները լճում տարեցտարի կրճատվում են, ինչը գերորսի արդյունք է, սակայն հաշվի առնելով Սևանա լճում այս ձկնատեսակի անցանկալի կարգավիճակն առաջիկա տարում առաջարկվում է շարունակել նրա չսահմանափակված որսը լճում: • Ըստ 2020 թ. ուսումնասիրությունների Սևանա լճում իշխանի ընդհանուր պաշարը կազմել է 4.56 տ-ի սահմաններում՝ Փոքր Սևանում՝ 0.47 տ, իսկ Մեծ Սևանում՝ 4.09 տ: • 2017-2019 թթ. լճում նկատվել է իշխանի պաշարների կրճատում 17-ից մինչև 1.0-1.5 տ, որը այդ տարիների ընթացքում իշխանի ապօրինի և չվերահսկվող որսի արդյունք էր: Սևանա լճում այս տարի գրանցված իշխանի պաշարների զգալի աճը պայմանավորված է Սևանի իշխանի պաշարների վերականգնման նպատակով վերջին տարիներին Սևանա լիճ և գետեր բազ թողնված Սևանի իշխանի
--	--	--	--	--	--	--

						<p>մանրաձկների և հասուն առանձնյակների հաշվին:</p> <ul style="list-style-type: none"> • Քանի որ Սևանի իշխանը շարունակում է հիմնականում գոյատևել արիեստական պայմաններում աճեցման և պարբերաբար բնական էկոհամակարգ մանրաձկների բաց թողնման հաշվին: Առաջարկվում է ամբողջ տարվա կտրվածքով ուժեղացնել իշխանի որսի հսկողությունը լճում, իսկ բազմացման շրջանում նաև գետերի գետաբերանային հատվածներում: • Առաջնային է նաև իշխանի համար ձվադրավայր հանդիսացող գետերի կենսապայմանների վիճակի վերականգնումը, ինչը ներկայում գտնվում է շատ վատ վիճակում և կարելի է արձանագրել, որ գետերի շատ փոքր հատվածներում են առկա համեմատաբար բավարար կենսապայմաններ այս ձկնատեսակի մանրաձկների գոյատևման համար: • Թեպետ լճում հանդիպում են կողակի և բեղաձկան առանձնյակներ, սակայն վերջիններիս քանակները գնալով կրճատվում են և ներկա պահին շատ սակավաթիվ վիճակում են գտնվում: • Լճի խեցգետնարդյունավետությունը վերականգնելու նպատակով պետք է ձեռք առնել հրատապ միջոցներ, մասնավորապես արգելել խեցգետնի որսը լճում և պայքարել որսագողության դեմ, արգելել խեցգետնի վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս: <p>(Ծավալուն հաշվետվությունը (117 թերթ) ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն)</p>
--	--	--	--	--	--	---

2.7	Անտառշերտերի և հողահանդակների հաշվառում, գույքագրում	Ափամերձ անտառների գույքագրման և հողօգտագործման քարտեզների թարմացման նպատակով տեխնիկական առաջադրանքի կազմում	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան	2020թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	Ներկա դրությամբ Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում իրականացվում են լայնածավալ անտառմաքրման աշխատանքներ: Աշխատանքների ավարտից հետո անտառների գույքագրման և հողօգտագործման քարտեզների թարմացման նպատակով կիրականացվի համապատասխան աշխատանքներ: Եվրամիության ու Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանության ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել «Սևան» ազգային պարկի կառավարման պլանը, որը կկանոնակարգի նաև այս հարցերը:
2.8	«Սևան» ազգային պարկի և համայնքների միջև սահմանների ճշգրտում	«Սևան» ազգային պարկի սահմանների չափագրում, կոորդինատների ճշգրտում և ամրագրում: «Սևան» ազգային պարկի և հարակից համայնքների հետ խնդրահարույց տարածքների հստակեցում, համադրվող տարածքների խնդրի կարգավորում	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության(համաձայնությամբ)	2020թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ Կադաստրի կոմիտեի հետ համատեղ քննարկվել է «Սևան» ազգային պարկի սահմանների, ինչպես նաև պարկի տարածքում հողամասերի նիշերի (1901.5մ, 1903.5մ և 1905.0մ) ճշգրտման և հաստատման հարցը: Կադաստրի կոմիտեի կողմից կազմվել են «Սևան» ազգային պարկի սահմանների ճշգրտման նախագծանախահաշվային փաստաթղթերը, հայտարարվել է մրցույթ և մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը պետք է իրականացնի պարկի սահմանների ճշգրտման աշխատանքները: Աստղածոր համայնքի միջոցներով՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը և Կադաստրի կոմիտեն նախաձեռնել են Աստղածոր համայնքի և պարկի սահմանների ճշգրտման աշխատանքները:

						<p>ՊՈԱԿ-ի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ճշտված սահմանով հատակագիծը ներկայացվել է Կադաստրի կոմիտե:</p> <p>Եվրամիության ու Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանության ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել «Սևան» ազգային պարկի կառավարման պլանը, որը կկանոնակարգի նաև այս հարցերը:</p>	
2.9	Սևանա լճի ջրհավաք ավազանում առաջացած կեղտաջրերի մաքրում	Լճի անմիջապես ափամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում	Տնտեսվարող սուբյեկտներ (համաձայնությամբ)	Շրջակա միջավայրի նախարարություն	2020թ. և շարունակական	Տնտեսվարող սուբյեկտների միջոցների հաշվին	<p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը Բազմիցս կազմակերպվել է քննարկումներ շահագրգիռ մարմինների հետ՝ ներգրավելով նաև մաքրման կայաններ արտադրող և տեղադրող ընկերությունների ներկայացուցիչներին, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները և մաքրման կայաններ արտադրող և տեղադրող ընկերությունները համաձայնություն են ձեռք բերել կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման վերաբերյալ: Տնտեսվարողների մի մասը ամռան ընթացքում հանգստի գոտին շահագործում են միայն որպես լողափ, առանց գիշերակացի, կենցաղային կեղտաջրեր չեն առաջանում և նրանց համար կարելի է դիտարկել բիոզուգարանների և անջրաթափանց սեպտիկ հորերի տեղադրման տարբերակը:</p> <p>Քանի որ ծանրաբեռնված հանգստի գոտիները հիմնականում գտնվում են Սևան-Լճաշեն թերակղզու գոտևորման հատվածում, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը առաջարկել է Սևան-Լճաշեն ճեմուղու նախագծում նախատեսել</p>

							կոյուղաջրերի հեռացման համակարգ: Պարբերաբար ծանուցվել է տնտեսվարող սուբյեկտներին իրենց տարածքներում կեղտաջրերի մաքրման կայաններ տեղադրելու անհրաժեշտության մասին:
2.1 0	Գավառի, Մարտունու և Վարդենիսի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայաններին կից կենսաբանական մաքրման բաղադրիչի կառուցման համար նախագծանախա հաշվային փաստաթղթերի մշակում	Կենսաբանական մաքրման բաղադրիչի կառուցման նախագծանախա աշվային փաստաթղթերի մշակում և հաստատում: Պիլոտային մեկ մաքրման կայանում կենսաբանական մաքրման բաղադրիչի կառուցում՝ համապատասխան ֆինանսավորման առկայության պարագայում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Շրջակա միջավայրի նախարարություն	2020 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կազմակերպվել են քննարկումներ Ջրային կոմիտեի, շրջակա միջավայրի և ՏԿԵ նախարարությունների ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքում կողմերը եկել են համաձայնության, որ հնարավոր ֆինանսական միջոցների առկայության դեպքում, առավել արդյունավետ կլինի նոր ԿՄԿ-ների նախատեսման և բնակավայրերի ջրահեռացման խնդիրների լուծման աշխատանքներն իրականացնել միաժամանակ: Այդ նպատակով Ջրային կոմիտեն առաջարկել է աշխատանքներն իրականացնել փուլերով: Կենսաբանական բաղադրիչի պիլոտային ծրագրի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ «Խիմմաստեր» ՍՊԸ-ի կողմից Ջրային կոմիտե է ներկայացվել առաջարկություն, որը քննարկվել է նաև «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ: «Խիմմաստեր» ՍՊԸ-ին առաջարկվել էր Ջրային կոմիտե ներկայացնել պիլոտային ծրագրի հայեցակարգային նախագիծը՝ համապատասխան հաշվարկներով և հիմնավորումներով, ինչպես նաև իրագործման արդյունքում ակնկալվող արդյունքներով: Դրանց հիման վրա Ջրային կոմիտեն նախատեսում է կազմակերպել մասնագիտական քննարկում: Միաժամանակ, հաշվի առնելով, որ պիլոտային ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտ</p>

						<p>են լինելու պարբերաբար կատարել կոյուղաջրերի համապատասխան լաբորատոր անալիզներ, իսկ լաբորատորիաները գտնվում են Երևան քաղաքում, ուստի առաջարկվել է փորձարկումները նախատեսել Աերացիա ԿՄԿ-ի տարածքում: Մինչև այսօր անհրաժեշտ հիմնավորումները չեն ներկայացվել և ծրագրին ընթացք չի տրվել:</p> <p>Եվրամիության ու Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանության ծրագրի շրջանակներում նախատեսվում է միջոցառումներ ուղղված կոյուղաջրերի մշակման, ներառյալ բնական լուծումների կարողությունների բարելավմանը:</p>	
2.11	<p>Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում գտնվող ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտի ռեկուլտիվացման նախնական ծրագրերի ելակետային տվյալների փաթեթների մշակում</p>	<p>Հավաքագրել և ստեղծել ելակետային տվյալների և տեղեկատվական թվային քարտեզների փաթեթ, ինչը կներառի Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում գտնվող ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտի</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>		2020 թ.	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p><u>Շրջակա միջավայրի նախարարություն</u></p> <p>2020 թվականին կատարվել է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում գտնվող Սոթքի լքված պոչամբարի և արտադրական լցակույտերի տարածքից նմուշառում: Վերցվել են տեղանքի հետ կողորդինատային կապակցում ունեցող 60 նմուշներ: Ընդերքօգտագործման թափոնների և հողերի քիմիական բաղադրության վերլուծության նպատակով դրանք «Հիդրոոդերնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հետազոտվել և ներկայացվել են լաբորատոր անալիզի արդյունքները:</p> <p>Ընդերքօգտագործման արդյունքում դեգրադացված տարածքների ռեկուլտիվացման նախագծի ելակետային տվյալների</p>

		շրջակա միջավայրի բաղադրիչների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ թափոնների օբյեկտում կուտակված թափոնների ծավալ, քիմիական բաղադրություն, հողերի և ջրերի աղտոտվածություն					հավաքագրման նպատակով մշակվել է հնժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման տեխնիկական բնութագիրը:
2.1 2	Ձկան պաշարների համալրում	Էնդեմիկ և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում, մանրածկան բացթողում	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ (համաձայնության),	Շրջակա միջավայրի նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ. և շարունակական	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում	«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» համալիր ծրագրի շրջանակներում իրականացվել է Սևանի իշխանի մանրածկան և մատղաշի բացթողում: Բացթողումն իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարի 2016 թվականի հունիսի 6-ի N138-Ա հրամանով ստեղծված մասնագիտացված աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ: 2020 թվականին իրականացրել է 625109 Սևանի իշխանի մանրածկան բացթողում, որից 592433 հատ՝ գեղարքունի և 32676 ամառային իշխան: Կարճադրյուր գետի ստորին հատվածում բաց է թողնվել գեղարքունի մանրածուկ 1.64-5.0 գ միջին քաշով 201859 հատ, իսկ Մասրիկ գետի ստորին հատված՝ 390574 հատ:

							Սևանա լիճ, Լճափ համայնքի հարակից տարածք բաց է թողնվել ամառային իշխանի մատղաշ 108-112գ միջին քաշով 32676 հատ:
2.1 3	«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում, հետազոտման տեխնոլոգիաների կիրառություն	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020 թ. և շարունակական	«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում միջոցառում՝ 303897.7 հազ. դրամ	<p>Սույն միջոցառման իրականացման համար բյուջեով հաստատված գումարի չափը 303897.7 հազ. դրամ է:</p> <p>«Սևան» ազգային պարկի պահպանություն Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան որս իրականացնելու համար շրջակա միջավայրի նախարարության և ձկնորսների միջև կնքվել են 255 պայմանագրեր՝ 235791 կգ սիգ որս իրականացնելու համար: Կնքված պայմանագրերի վերջնաժամկետները սահմանվել են 2020թ. դեկտեմբերի 1-ը:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից կահավորվել են Սևանա լիճ մուտքի և ելքի 25 կետեր, սակայն մուտք և ելք կատարվել է 19-ը կետերից: Գիտական հետազոտությունների, մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է արդյունագործական ձկնորսության մշտադիտարկման, տվյալների հավաքագրման և ամփոփման աշխատանքներ: Նշված ժամանակահատվածում որսվել է 204491.5 կգ սիգ: ՊՈԱԿ-ի կողմից վարվել են հաշվառման մատյաններ յուրաքանչյուր օրվա իրականացված որսի տվյալների վերաբերյալ:</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել է ամենօրյա հսկողություն՝ Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեզգետնի որսի իրականացման շրջանակներում</p>

						<p>պայմանագրեր կնքած ձկնորսների՝ Սևանա լիճ մուտքի-ելքի ժամերի, որսված ձկան քանակի նկատմամբ, ինչպես նաև անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման, հայտնաբերման ուղղությամբ:</p> <p>2020թ. ընթացքում արձանագրվել է ապօրինի ձկնորսության, շինարարության, ծառահատման, ավազի դուրս բերման, հողազավթման, արածեցման, արգելավայրային ռեժիմի խախտման դեպքեր: Կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:</p> <p>Հաշվետու տարում, ապրիլ-նոյեմբեր ամիսներին, ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող 10 գետերի (Դրախտիկ, Կարճաղբյուր, Վարդենիկ, Մարտունի, Ծակքար, Լիճք, Արգիճի, Մասրիկ, Գավառագետ, Ձկնագետ) տարբեր հատվածների ջրերում 20°C և 37°C աճող սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը (լակտոզադրական աղիքային ցուպիկների քանակը 1 լ ջրում), ինչպես նաև ջրում լուծված թթվածնի, օրգանական նյութի (պերմանգանատային օքսիդացում) պարունակությունը և ջրի ջերմաստիճանը:</p> <p>Հուլիս-օգոստոս ամիսներին մանրէաբանական ուսումնասիրություններ են իրականացվել նաև Սևանա լճի պելագիալի և ռեկրեացիոն գոտիների ջրերում:</p> <p>Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով կատարվել է գետերի ջրերի որակի էկոլոգասանիտարական</p>
--	--	--	--	--	--	---

						<p>գնահատում:</p> <p>Ելնելով մանրէաբանական ցուցանիշների (200C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակ, կոլի-ինդեքս) ստացված արդյունքներից՝ հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը, համաձայն Ռոմանենկոյի (Романенко и др., 1990) մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, դասվում են.</p> <p>Գետ Դրախտիկ</p> <ul style="list-style-type: none"> • Դրախտիկ գյուղից մոտ 100մ վերև՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ թույլ աղտոտված կարգի, • Դրախտիկ գյուղի դուրս հոսող հատված՝ ուժեղ աղտոտվածից խիստ աղտոտված կարգի, • գետաբերան՝ ուժեղ աղտոտվածից խիստ աղտոտված կարգի: <p>Գետ Ձկնագետ</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի, • Սեմյոնովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50 ներքև՝ ուժեղ աղտոտված կարգի, • գետաբերան՝ չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Գավառագետ</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ բավական մաքուր կարգի, • Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ՝ խիստ աղտոտված կարգի, • Գետաբերան՝ ուժեղ աղտոտված կարգի:
--	--	--	--	--	--	--

						<p>Գետ Մաքրումի</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի, • Արտահոսքերի մուտքի հատված՝ չափազանց կեղտոտ կարգի, • Գետաբերան՝ չափազանց կեղտոտ կարգի: <p>Գետ Ծակքար</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ միանգամայն մաքուր կարգի • Գետաբերան՝ չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Կարճաղբյուր</p> <ul style="list-style-type: none"> • Կարճաղբյուր համայնքի սկզբնամաս՝ ուժեղ աղտոտված կարգի • Գետաբերան՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ ուժեղ աղտոտված կարգի: <p>Գետ Մասրիկ</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ բավական մաքուր կարգի, • Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի, • Գետաբերան՝ թույլ աղտոտված կարգի: <p>Գետ Լիճք</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ չափազանց մաքուր կարգի • Գետաբերան՝ միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի: <p>Գետ Արգիճի</p> <ul style="list-style-type: none"> • Ակունք՝ շատ մաքուրից բավական մաքուր կարգի • Ներքին Գետաշենից ներքև՝ -ըստ սապրոֆիտ մանրէների քանակի բավական մաքուր կարգի ըստ Կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի,
--	--	--	--	--	--	--

						<ul style="list-style-type: none"> ● Գետաբերան՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Վարդենիկ</p> <ul style="list-style-type: none"> ● Ակունք՝ բավական մաքուր կարգի ● Հոսքաջրերի մուտքից մոտ 50 մ ներքև՝ խիստ աղտոտվածից չափազանց կեղտոտ կարգի, ● գետաբերան՝ ուժեղ աղտոտվածից խիստ աղտոտված կարգի <p>Համաձայն Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման, ըստ 37°С-ում աճող սապրոֆիտ-հետերոտրոֆ մանրէների թվաքանակի, Ձկնագետ, Գավառագետ, Մարտունի, Ծակքար, Մասրիկ, Լիճք և Վարդենիկ գետերի ակունքների ջրերը դասվում են «մաքուր», իսկ Դրախտիկ և Կարճաղբյուր գետերը՝ «թույլ աղտոտված» դասին:</p> <p>Գետերի համայնքներից դուրս եկող, մաքրման կայանների արտահոսքերի և հոսքաջրերի թափման հատվածների ջրերը դասվել են. Արգիճի գետը՝ «մաքուր», Ձկնագետ, Գավառագետ և Մասրիկ գետերը՝ «թույլ աղտոտված», Վարդենիկ գետը՝ «ուժեղ աղտոտված», իսկ Մարտունի գետը՝ «շատ ուժեղ աղտոտված» դասին:</p> <p>Ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Կարճաղբյուր և Արգիճի գետերի գետաբերանների ջրերը դասվում են «թույլ աղտոտված», Դրախտիկ և Վարդենիկ գետերը՝ «չափավոր աղտոտված», Մարտունի գետը՝ «շատ ուժեղ աղտոտված», իսկ Լիճք գետը՝ «մաքուր» դասին:</p> <p>Ռեկրեացիոն գոտիների (լողափեր) ջրերի սանիտարական վիճակի գնահատման համար</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ուսումնասիրվել է աղիքային ցուպիկների խմբի մանրէների (ընդհանուր կոլիֆորմ մանրէներ) քանակը:</p> <p>Հանգստի առավել ակտիվ շրջանում՝ օգոստոսի առաջին տասնօրյակում, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Փոքր Սևանի հիմնական լողափերի (Արևիկ, Հանրային N 1, N 2, N 3) ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկների ինդեքսը փոխվել է 100-1000 ԳԱՄ/լ սահմաններում: Ինչպես նախորդ տարում, առավել բարձր արժեք արձանագրվել է հանրային N2 լողափում, ինչը պայմանավորված է վերջինիս առավել ծանրաբեռնվածությամբ: Այսպիսով, ելնելով 20°C-ում աճող սապրոֆիտ մանրէների ստացված արդյունքներից Սևանա լճի պելագիալի ջրերը, համաձայն Դրաչևի (Драчев С. М., 1964) դասակարգման, դասվում են չափավոր աղտոտված կարգի: Ռեկրեացիոն գոտիների ջրերում, ըստ ընդհանուր կոլիֆորմ մանրէների քանակի, շեղումներ չեն արձանագրվել:</p> <p>Կենսաբազմազանության ուսումնասիրություններ</p> <p>2020թ. Սևանա լճում իրականացվել է ձկների պոպուլյացիոն և կենսաբանական ցուցանիշների, նրանց տարածական տեղաբաշխման, կենսապայմանների ուսումնասիրություններ: Որոշվել և հավաքագրվել է սիգի, կարասի, իշխանի չափատարիքային կազմը, բեղունությունը, բթվածությունը: Գնահատվել է սիգի գիրացող և ձվադրող վտառների վիճակը:</p> <p>Ուսումնասիրվել են խեցգետնի պոպուլյացիայի վերարտադրման, չափատարիքային և սեռական</p>
--	--	--	--	--	--	---

							կառուցվածքները, բազմացման ժամանակահատվածը, բեղունության ցուցանիշները, տարածական տեղաբաշխման առանձնահատկությունները: (Ծավալուն հաշվետվությունը (26 թերթ) ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն):
2.1 4	Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողությա ն իրականացման ուղղությամբ միջոցների ծեռնար կում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում	աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում	Տարածքայ ին կառավար ման և ենթակառ ուցվածքներ ի նախարար ություն	Քաղաքաշինությ ան կոմիտե Շրջակա միջավայրի նախարարությու ն Բնապահպանութ յան և ընդերքի տեսչական մարմին Գեղարքունիքի մարզպետարան «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությ ան (համաձայնությա մբ)	2020թ. և շարունակ ական	Հայաստանի Հանրապետությ ան օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	«Հ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համագործակցությամբ և ՀՀ մարզերի ու համայնքների մասնակցային գործընթացով 2020 թվականին գույքագրվել և քարտեզագրվել են հանրապետության բոլոր աղբավայրերն ու աղբանոցները, այդ թվում Գեղարքունիքի մարզում առկա բոլոր աղբանոցները: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում, նախատեսվում է Գեղարքունիքի մարզի բոլոր բնակավայրերում ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության համակարգ և մարզում գոյացող ամբողջ աղբը տեղափոխել Կոտայքի մարզի Հրազդան համայնքում կառուցվող առաջին սանիտակարամն աղբավայր: Աղբավայրի կառուցումը նախատեսվում է ավարտել 2022 թվականին, ընդ որում նախատեսվում է փակել ու կոնսերվացնել մարզի բոլոր աղբավայրերն ու աղբանոցները: «Հ քաղաքայինության կոմիտե» «Ապօրինի

						<p>աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում» համակարգող աշխատանքային խմբում:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2020 թվականին Կոմիտեի պատվիրատվությամբ մշակվել են Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր՝ երեք միկրոռեգիոնի համար, իսկ 2021 թվականին նախատեսվում է մշակել՝ հինգ միկրոռեգիոնի համար, որոնցում ներառված են նաև աղբահանության միասնական կանոնակարգման խնդիրները՝ չարտոնված աղբավայրերի ռեկուլտիվացման առաջարկներով:</p> <p>Գեղարքունիքի մարզպետարան 2020 թվականի ընթացքում, (COVID-19) պանդեմիայի և ռազմական դրությամբ պայմանավորված, մարզում շաբաթօրյակներ չեն կազմակերպվել:</p> <p>Մարզում եղած 138 աղբանոց-աղբակույտներից 109-ը փակվել են, առկա է 29 օրինական աղբավայր:</p>	
2.1 5	Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգի հավատարմագրային կառավարման իրականացում	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործում և պահպանում՝ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության		2020թ.	2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան-	<u>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</u> Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար ՀՀ պետական բյուջեով 2020թ. նախատեսվել է հատկացնել 205.8 մլն. դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է:

			<i>Ջրային կոմիտե</i>			Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2020 թվականի ավարտը Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205,800.0 հազ. դրամ:	
2.1 6	Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի կենսառեստորսնե	«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման,	Շրջակա միջավայրի նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	2020 թվականի հունիսի 18-ի N1021-Լ և 2020 թվականի օգոստոսի 27-ի N1421-Լ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N1293-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

<p>րի (այդ թվում՝ ձկնային և խեցգետնային) արդյունահանման և արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակները և արդյունագործական որսի որակի բնութագրերի սահմանում՝ համաձայն հավելվածի</p>	<p>բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2020 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման (այսուհետ՝ որոշում) հաստատումից հետո՝ հիմք ընդունելով նախորդ տարվա «Սևանա լճում և նրա ջրահավաքավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման ամփոփ արդյունքները, կատարվում է լրացում որոշման «Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակները</p>					<p>Կառավարության որոշումները, որոնցով կանոնակարգվում է Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների օգտագործման և կայուն կառավարման ոլորտը: Ըստ այդմ, արդյունագործական ձկնորսության նպատակով Սևանա լիճ լողամիջոցների մուտքն ու ելքն կիրականացվի միայն որոշմամբ հաստատված 25 տեղամասերից: 2020 թվականի ընթացքում ձկան արդյունագործական որսի ծավալը Սևանա լճում սահմանվել է 300 տոննա, սահմանվել է ձկան որսի վերահսկողության նոր գործիքներ, որոնք թույլ կտան արդյունավետ պայքարել ապօրինի ձկնորսության դեմ և գործուն քայլեր ձեռնարկել Սևանի ձկնապաշարների վերականգնման ուղղությամբ: Որոշման համաձայն.</p> <p>1.Արգելվում է Սևանա լճում բոլոր ձկնատեսակների արդյունագործական որսը՝ բացի սիգից:</p> <p>2.Սիգ ձկնատեսակի որսն իրականացվում է Սևանա լճի ամբողջ տարածքով, ափից առնվազն 500 մետր հեռավորության վրա: Ձկնորսության համար թույլատրելի քաշ է սահմանվել ոչ պակաս, քան 400 գրամը:</p> <p>3.Հաշվի առնելով ձկների ձվադրման շրջանը՝ որսն արգելվում է իրականացնել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 1-ը:</p> <p>4. Ձկների արդյունագործական որսն իրականացվում է դնովի ցանցերով (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ և ավելի):</p> <p>5.Սևանա լճում ձկների արդյունագործական որսն իրականագվելու է օրվա լուսային ժամերին:</p>
--	---	--	--	--	--	---

		<p>և արդյունագործակա ն որսի որակի բնութագրերը» Հավելվածում</p>				<ul style="list-style-type: none"> • 2020 թվականի հունիսի 18-ի N1123-Ն և 2020 թվականի օգոստոսի 27-ի N1420-Լ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշումները, որոնցով կանոնակարգվել է որսի նպատակով օգտագործվող լողամիջոցների մուտքի և ելքի տեղամասերը՝ համաձայն համապատասխան տարվա տարեկան ծրագրով հաստատված տեղամասերի ցանկի: <p>7.1 կետով՝ «Հայտերը ներկայացվում են յուրաքանչյուր տարի սույն կարգի 5-րդ կետով սահմանված կայքէջում համապատասխան հայտարարությունը տեղադրելու օրվանից 30 օրվա ընթացքում (բացառությամբ 2020 թվականի, որի դեպքում հայտերը ներկայացվում են սույն կարգի 5-րդ կետով սահմանված կայքէջում համապատասխան հայտարարությունը տեղադրելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում):</p> <p>7.2. Հայտերի ընդունումից հետո լիազոր մարմինը տարեկան ծրագրով ձկան և խեցգետնի օգտագործման առավելագույն չափաքանակը բաշխում է ներկայացված և սույն կարգով սահմանված պահանջները բավարարող հայտերի քանակի վրա և ստանում միջինացված ցուցանիշ: Հայտատուի կողմից հայտում ներկայացված չափաքանակն ապահովելու նպատակով լիազոր մարմինը՝</p> <p>1) միջին ցուցանիշից ցածր չափաքանակով հայտերը բավարարում է ամբողջությամբ.</p>
--	--	--	--	--	--	---

							2) միջին ցուցանիշից բարձր չափաքանակով հայտերը բավարարում է միջին ցուցանիշից ցածր չափաքանակով հայտերը բավարարելուց հետո մնացած չափաքանակի հավասարաչափ բաշխմամբ:»:
--	--	--	--	--	--	--	--